Cashback
ծրագրի կանոնները

1. Cashback ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսում է American Express Cashback Քարտով Հայաստանում կատարած բոլոր վճարային գործառնությունների 1%-ի (մեկ տոկոս) չափով վճարում Քարտատիրոջ Քարտային հաշվին, որից կգանձվի և ՀՀ պետական բյուջե կվճարվի եկամտահարկ՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

2. www.americanexpress.am կայքէջում ներկայացված մի շարք սուպերմարկետներում վճարումներ կատարելու դեպքում Ծրագրի շրջանակում Քարտատիրոջ Քարտային հաշվին կվճարվի գործառնությունների գումարի 2%-ը (երկու տոկոս), որից կգանձվի և ՀՀ պետական բյուջե կվճարվի եկամտահարկ՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

3. Ծրագրին անդամակցումը կատարվում է ավտոմատ կերպով՝ Քարտի ձեռքբերման հետ մեկտեղ, և չի ենթադրում որևէ լրացուցիչ անդամավճար կամ այլ տեսակի վճարներ:

4. Կանխիկացման գործառնությունների, քարտից քարտ փոխանցումների, կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, բանկին տրամադրված պարբերական վճարման հանձնարարականով կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, ՀՀ տարածքից դուրս կատարված վճարային գործառնությունների (ներառյալ ՀՀ առևտրային բանկերի կողմից չսպասարկվող կայքերում կատարված օնլայն վճարումների), ինչպես նաև ՀՀ տարածքում գրանցված էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվող գործարքների և բջջային օպերատորների գրասենյակներում վճարումների դեպքում Cashback չի կիրառվում:

5. Ծրագրի շրջանակում վճարման ենթակա գումարը Քարտային հաշվին վճարվում է Քարտի պատվիրման օրվանից յուրաքանչյուր տասներկու ամիսը մեկ՝ տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրը:

6. Քարտը որպես Լրացուցիչ Քարտ տրամադրելու դեպքում Ծրագրի շրջանակում վճարման ենթակա գումարը Քարտային հաշվին վճարվում է Քարտի պատվիրման օրվանից յուրաքանչյուր տասներկու ամիսը մեկ՝ տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրը, իսկ վերջին տարվա վճարման ենթակա գումարը, ինչպես նաև Լրացուցիչ Քարտը 1 (մեկ) տարուց պակաս գործողության ժամկետով տրամադրելու դեպքում վճարման ենթակա գումարը Քարտային հաշվին վճարվում է հիմնական քարտի գործողության ժամկետի վերջին ամսվա վերջին աշխատանքային օրը:

7. Ծրագիրը գործում է Քարտի ակտիվացման պահից մինչ վերջինիս գործողության ժամկետի ավարտը:

8. Քարտատիրոջ կողմից Քարտը գործողության ժամկետից շուտ փակելու դեպքում Ծրագրի շրջանակում կուտակված և դեռևս չվճարված գումարները զրոյացվում են և ենթակա չեն վճարման Քարտատիրոջ քարտային հաշվին:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Արամի 82-84, 0002, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
www.acba.am | հեռ. +374 10 31 99 99